

զով, և յոյն՝ կրօնքով), ինչպէս տասնեւմիերորդ դարին ամբողջովին կատարած էր անձամբ այսպիսի թարգմանութիւն մը՝ հայ հոռոմ կարապետ Իշլուն, որպէս կը գրէ Հ. Ղուկաս Ինճիհեան ի հատորն Ասիա: Հայ-հոռոմութիւնն ալ այսպէս. ազգին մէջ քանի մը հարիւր և աւելի հին տարիներու տարածմ' երեւոյթ մըն էր՝ նման ամիրայութեան, և արդ երկուքն ալ՝ գրեթէ ոչ եւս են նմանաբաղդաբար:

Ժ.

Ինչպէս ակնարկեցինք վերերն ալ՝ այս ամիրաներէն բացառաբար դուրս կ'իյնային՝ նախ մեծ ամիրան Ղազէզ Արթին, որուն պատմութիւնն՝ աղէկ գէշ՝ գրուած է մասնակի տետրակով մը, և հոս գործիս համեմատական չափը չներեր երկայնաբանել իր վրայ. ապա Տիւզեան և Չարպհանէի միւս ջոջերը, վառօղպակտ Տատեանները, որոնց վրայեւս կարծէ զրել առանձինն, ճարտարապետ Պալեանները, որոնց վրայ՝ կուզէինք որ զրէր ավզականութիւն չունեցող մարդ մը, Սէրվերեան Յովհաննէս ամիրայ, նաեւ քանի մը հացապետներ, որոնց կարգէն էր՝ Նորատունկեան Յակօբ, Գրիգոր, Սիմէոն հայրերուն վարպետը՝ էքմէքճի Պաշի Արթին անունով, որուն խորանն (խաւնխ) էր սյոժմեան Պէր-

« Զամիւ և արդեամբ բարեպաշտօմ և աստուածասէր Սառաֆ Ամաստաս աղայիմ, որ ի Սուրբ Գէորգայ վամից գիւղէմ Ակմայ քաղաքիմ »:

Հրամանաւ Տեառն Ազաթամգեղոսի Սրբազան արքեպիսկոպոսի և տիեզերական Պատրիարքի Յունաց տպագրեալ յՕրթագիւղ 1831. ՌՄԶ:

1. Այս այն Արթինն է՝ որ ժամանակիմ տասն, երկուներում մէջ ամէնէմ աւելի պմդողմ էր Աստուածատուր պատրիարքի հրաժարելում վրայ-